



ԵՐԱԺԻՇՏ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

Լույս է տեսնում 2005թ. դեկտեմբերից

12 (156) դեկտեմբեր 2018

գինը՝ 200 դրամ



ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ 2019

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ



Լուսանկար՝ Աննա Արզանյանի

Հասնիկ
Համբարյան,
Սևան
Ղարիբյան,
Շիրազ Այարյան,
Մարինե
Օթարյան,
Բարդի
Մինասյան,
Լիլիթ
Եփրեմյան,
Սաթենիկ
Ուլիխանյան,
Սարգիս
Աղանյան

Միմֆերուպոլ, Յալթա, Սուդակ, Երևան. հայ մեծ դասական՝ Ալեքսանդր Սպենդիարյանը բնակատեղի է ունեցել նշված բոլոր քաղաքներում: Եվ դրանցից յուրաքանչյուրում, լինելով դա, օրինակ, Յալթայի շքեղ առանձնատանը, թե երևանյան համեստ բնակարանում, ժամանակի մտավորականների հետ հանդիպումներն ուղեկցվում էին երաժշտությամբ: Հետագայում էլ, կոմպոզիտորի՝ արդեն տուն-թանգարանի հարկի տակ կամ բակում անցկացվող երաժշտական միջոցառումները դարձել են սպենդիարյանական բարի ավանդույթների շարունակություն: Եվ ահա 2018 թվականին, որին շուտով կասենք մնաս բարով, թանգարանում կայացավ 2 առանձնահատուկ երաժշտական հանդիպում: Նպատակը երիտասարդ երաժիշտներին, մասնավորապես՝ կոմպոզիտորներին ինքնադրստորման հարթակ տրամադրելն էր, մասնագետների և պարզապես երաժշտասեր ունկնդրի միջև անմիջական երկխոսությանը նպաստելը:

5

ՍԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԶՈՐ ՈՒԺԸ



«Փարոս» կամերային երգչախմբի (խմբավար Ռուբեն Կարասեֆերյան) և Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի երգչախմբի համատեղ ելույթը, խմբավար՝ Մարիա Գալստյան

Դեկտեմբերի 6-ին, Կամերային երաժշտության տանը, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կազմակերպել էր Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցին նվիրված «Մարդասիրության հզոր ուժը» խորագրով հիշատակի միջոցառում՝ ոգեկոչելու աղետի անմեղ զոհերի հիշատակը, նշելու մարդասիրության հզոր ուժը և երախտագիտության խոսք հղելու միջազգային համրությանն ու Կարմիր խաչի միջազգային շարժման ընտանիքին՝ աղետից հետո ցուցաբերած անգնահատելի մարդասիրական աջակցության համար:

3

ՄԻ ԴՐՎԱԳ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՑ



ԵՊԿ 2-րդ շենք փ. Կիրովի (այժմ՝ Կորյունի) 1948-1969 թթ.

ԵՊԿ պատմատեսական ֆակուլտետի դասախոսներ. 1967 թ. Իրինա Տիգրանովա, Աննա Բարսամյան, Մարգարիտ Բրուտյան, Կոնստանտին Մելիք-Վրթանեսյան, Գայանե Չերտոսարյան, Միխայիլ Տերյան, Մարգարիտա Հարությունյան, Թերեզա Արազյան, Պարգ Բուդաղյան, Սերգեյ Կոպտև, Նովակիս Դերոյան, Սուսաննա Ամատունի, Գեորգի Տիգրանով, Մարիամ Տոնյան, Էդվարդ Փաշինյան

Սույն թվականի նոյեմբերի 28-29-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում տեղի ունեցավ ներբուհական գիտաժողով, նվիրված կոնսերվատորիայի պատմատեսական բաժնի հիմնադրման 80-ամյակին:

2

ПРЕДАННОСТЬ ИСКУССТВУ



Презентация книги Наиры Хачатрян «Даниел Казарян»

19 декабря 2018 года в Музее литературы и искусства им.Е.Чаренца состоялась презентация книги Наиры Хачатрян «Даниел Казарян», изданной издательствами «Гитуцюн» и «Комитас» (2018). Редактор – профессор Ереванской государственной консерватории Давид Гарсеванович Казарян.

Наира Хачатрян – пианистка, концертировала в составе фортепианного дуэта «Рапсодия» и камерных ансамблей, лауреат международного конкурса (Италия, 2003), доцент Ереванской государственной консерватории им. Комитаса.

6

ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ «ՀԱՏԸՆՏԻՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ»Ը ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ ԴԱՇՆԱԿԱՀԱՐՆԵՐԻՆ

4

Работа с программой «MuseScore» (урок 8): Набор полной партитурной темы

11

ՄԻ ԴՐՎԱԳ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՑ



ԱճՆԱ ԱՐԼՅԱՏՅԱՆ



ՄԱՐԻԱՄ ՅՈՆՅԱՆ,
ԵՊԿ պատմատեսական բաժնի առաջին
շրջանավարտներից



ՍԱԽԵՆԻԿ ՄԱՊՏՅԱՆ,
Արմեն Բուդախյան



Գիտաժողովի մասնակիցներ՝ Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի
գիտաշխատող Հասմիկ Համբարյան,
տնօրեն՝ Ս. Օթարյան, ԳԱԹ-ի երաժշտության բաժնի վարիչ՝
Նարդուհի Սարգսյան, Ցողիկ Բեքարյան և ԵՊԿ դասախոսներ

1 Եղավ անդրադարձ հիշյալ բաժնի անցած բեղմնավոր ուղու, նվաճումների մասին, լուսաբանվեց ամբիոնի երախտավորների դերը և ներդրումը ուսումնական և գիտական ասպարեզում, հաղորդվեց միջազգային գիտաժողովների մասին, նվիրված Կոմիտասին, Արամ Խաչատրյանին, ծանուցվեց նոր հրապարակումների մասին: Կային զեկույցներ նաև հայ հոգևոր երաժշտության տեսության շուրջ:

Օրախնդիր թեմաներից էր նաև Արամ Խաչատրյանի ստեղծած՝ Խորհրդային Հայաստանի օրհներգի վերականգնման, բովանդակության նորացման խնդիրը, ինչը բուռն բանավեճի տեղիք տվեց: Նախքան դրան անդրադառնալը, հիշեցնեց այդ «վաղնջական» հարցի նախապատմությունը, ինչը խնդրո առարկայի վրա լրացուցիչ լույս կսփռի: Հայտնի է, տարիներ առաջ անկախ Հայաստանի նոր օրհներգի համար հայտարարվել էր մրցույթ: Հանձնախմբի անդամներն ընդհանուր եզրակացության չեկան: Եվ հանձնախմբի նախագահ Էդվարդ Միրզոյանը ստիպված եղավ այդ հարցը քննարկել այն ժամանակվա Հանրապետության ղեկավար Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Կոմպոզիտորը պատմում է. «Ես տեղեկացրի նրան, որ, թեպետ բոլորին է հայտնի «Մեր Հայրենիք» երգի գեղարվեստական ցածր մակարդակը, սակայն ոմանք ուզում են այն տառացիորեն «քարշ տալով», անցկացնել» (Эдвард

խախտեց: Եվ առանց նոր մրցույթի հիմնի հարցը մտավ Գերագույն Խորհրդի նիստի օրակարգ, և «Մեր Հայրենիք»-ը նույնիսկ կատարվեց: Ե. Միրզոյանը, պատմում է. «Մեր Հայրենիք» երգը սկսվելուց ախտ, ամբողջ դահլիճը ոտքի ելավ, և վկաները հաստատեցին, որ դա Լ. Տեր-Պետրոսյանի նախածնունդն էր» (С. 202) (անշուշտ նաև Լորիս ճգնավորյանի դրոմամբ):

Դառնալով հիշյալ գիտաժողովին, նշեմք, որ մտքերի փոխանակման ընթացքում պարզվեց մի քանի մոտեցում, որոնք հիմնված էին տարբեր չափանիշների և նկատառումների վրա: Գիտաժողովի նիստը վարող Աճնա Արևշատյանի կարծիքով Տիգրան Մանսուրյանի օրհներգը՝ գրված է. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» քերթվածի խոսքերով, լիրիկալ կարող է լինել նոր Հայաստանի հիմնը:

Ըստ արժանավայել գնահատելով Տ. Մանսուրյանի օրհներգը, Լուսինե Սահակյանը նշեց, որ այն թերևս լայն գանգվածների համար դժվար կլինի երգել: Իսկ Օլյա Նուրիջանյանը կարծում է, որ ներկայումս Ա. Խաչատրյանի հիմնը իրեն հավասարը չունի, նույնիսկ եթե ապագայում ստեղծվի էլ, ապա քաղաքական իրադարձությունների հետ կապված, օրհներգերի այդքան հաճախակի փոփոխությունները խնչընդոտում են պատմության շարունակականությանը, ավանդականությանը: Բացի այդ, նա վկայակոչեց այն հարցադրույցը, որտեղ Կոմստանդին Օրբելյանը (ավագը) խոստո-

և քաղաքական առումով, որպես Հայաստանի առաջին հանրապետության հիշատակ և խորհրդանիշ, այն պետք է չփոխարինվի մեկ այլ ցանկացած հիմնով: Մեր այդ հանդիպմանը ներկա էր նաև բանասեր Արտեմ Սարգսյանը, ով ժամանակին մասնակցել էր Ա. Խաչատրյանի հիմնի երաժշտության համար գրված նոր տեքստերի մրցույթին, և դեմ էր Վ. Ջաքարյանի տեսակետին:

Գիտաժողովի մասնակից Ալինա Փահլևանյանը ևս Ա. Խաչատրյանի հիմնի երաժշտության համար նոր խոսքեր էր գրել, որոնք և ընթերցեց ներկաների համար (մեզ հայտնի են և այլ տեքստեր՝ Արշակ Բանուշյանի, Ռոբերտ Միրզոյանի և այլոց):

Գիտաժողովի մասնակիցներից ոմանք կողմ էին Ա. Խաչատրյանի հիմնի վերականգնմանը, նկատի առնելով կոմպոզիտորի համաշխարհային ճանաչումը և փառքը:

Իսկ ըստ Կարինե Ջաղացպանյանի, քանի որ Ա. Խաչատրյանի հիմնը իր թույլ ստեղծագործություններից է, հարկ է նորը ստեղծել:

Այս կարծիքին հակադրվեց Միեր Նավոյանը, օրինակ բերելով Ֆրանսիայի ազգային հիմն «Մարսելյեզը», որը թեպետ Ռուսթե դը Լիլը ստեղծել է բնավ ոչ ներբողին համապատասխան կանոններով, սակայն ընդունվել է՝ որպես պատմական իրադարձության խորհրդանիշ: Այս մոտեցումը հակադրվում է Կ. Ջաղացպանյանի և Աճնա Արևշատյանի հնչեցրած տեսակետին, համաձայն որի, Ա. Խաչատրյանի հիմնը լավագույն գործերից չէ և ինչ-որ տեղ ծանծաղանդ: (Հետաքրքիր է, որ Ա. Խաչատրյանի հիմնը 1944 թվականից ամեն օր առնվազն երկու անգամ հնչել է ռադիոյով, և հանձարեղ «Սպարտակ» բալետի բժախնդիր հեղինակը, մինչև իր կյանքի վերջը՝ 1978թ., այսինքն 34 տարի, հանդուրժել է, և չի նկատել, կամ չի նեղվել, «պատվանդանի» վրա դնելով, աշխարհին ներկայացնելով իր «թույլ» ստեղծագործությունը): Մինչդեռ մեր կարծիքով, այդ հիմնը՝ նորացված խոսքերով, կարող է ծառայել որպես նոր Հայաստանի օրհներգ: Մանավանդ, որ այն հարուստ է ազգային խորհրդանիշներով: Նրա «վեկտորներից» մեկը պատմական ժամանակի մեջ է՝ նրա սաղմոսերգային մեղեդին հիշեցնում է Ներսես Շնորհալու (12-րդ դար) «Քրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ» երգը, որը «Ճյուղավորվել» է, նորովի ծաղկել Կոմիտասի բազմաձայն «Պատարագում»:



ԵՊԿ գիտաժողովի մասնակիցներ և հյուրեր



ՈՂՅՈՅԻ խոսքով հանդես եկավ ԵՊԿ
գիտության գծով պրոռեկտոր
Շովհնար Մովսիսյանը

Мирзоян. Фрагменты., литературная запись Армена Будагына, Ер.: Амроц груп, 2005, С. 201): Այնուհետև կոմպոզիտորն առաջարկեց Լ. Տեր-Պետրոսյանին, որ, նախքան հարցի վերջնական լուծումը, շարունակեն հնչեցնել Ա. Խաչատրյանի օրհներգի նվագախմբային ձայնագրությունը: Սակայն Լ. Տեր-Պետրոսյանը պայմանավորվածություններ

վանել էր, որ փափագում է, սպասում Ա. Խաչատրյանի հիմնի վերականգնմանը, անշուշտ, նոր խոսքերով: Սրան հակառակ, թեպետ կոմպոզիտոր Վաղարշակ Ջաքարյանը ներկա չէր հիշյալ գիտաժողովին, սակայն տողերիս հեղինակը ներկաներին փոխանցեց նրա կարծիքը: Այն է. պրոֆեսիոնալ առումով Ա. Խաչատրյանի հիմնը, անշուշտ, բարձր է քան ներկայիս «Մեր Հայրենիք» օրհներգը, սակայն պատմական

մաձայն «Պատարագում»:

Ըստ Ալինա Փահլևանյանի, փոքրիկ Արամն իր մոր հետ հաճախ էր այցելում Թիֆլիսի հայկական եկեղեցի, որտեղ և տղան բազմիցս լսած պիտի լիներ այդ այդ երգը:

Հիմնի մյուս վեկտորը տարածական է, աշխարհագրական՝ այն ավարտվում է ազգային-ազատագրական պայքարն արտացոլող Տիգրան Չուխաջյանի «Ձեյթունցիների քայլերգը» եզրափակող դարձվածով: Եվ այս ամենը խարսխվում է պատմական հիշողության, «արխետիպի» վրա: Չէ՞ որ Ա. Խաչատրյանը, ինչպես և իր մեծ ուսուցիչ Կոմիտասը, ծագումով Գողթան գավառից են, հանձարեղ Գողթան երգիչների հետևորդներն են: Մեր այս դիտարկման ավարտին տեղին են հնչում Մարտիրոս Սարյանի հետևյալ խոսքերը. «Ես հինգ հազար տարեկան եմ, նույն տարիքն ունի և Արամ Խաչատրյանը, քանի որ արվեստագետներն իրենց մեջ տեղավորում են սեփական ժողովրդի կենսագրությունն ու պատմությունը» (Юзефович В., Арам Хачатурян., М., 1990, С. 293):



Մ. Արայան, Սահենիկ Մաղախյան, Շուշանիկ Բարայան,
Գոհար Շազոյան



Արմինե Գրիգորյան, Լիլիթ Երնջակյան

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀՁՈՐ ՈՒԺԸ



ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյան

1 - Այստեղ ենք ոգեկոչելու աղետի անմեղ զոհերի հիշատակը, այստեղ ենք նշելու մարդասիրության հզոր ուժը, որի շնորհիվ հնարավոր է հաղթահարել ցանկացած դժվարություն, այստեղ ենք երախտագիտության խոսք հղելու Կարմիր խաչի շարժման ընտանիքին, ովքեր մեր կողքին են եղել ինչպես 1988-ին այնպես էլ այս 30 տարիների ընթացքում՝ նվիրյալ, հավատարիմ և պատրաստակամ, -



«Մարդասիրության հզոր ուժը» խորագրով բեմական ներկայացում՝ երիտասարդ դերասանների մասնակցությամբ

իր ելույթում նշեց ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը:

Ներկաներին իր ուղերձն էր հղել նաև ՀՀ Նախագահ Արմեն Սարգսյանը, որը փոխանցեց նրա օգնական Գագիկ Նահապետյանը:

- Վաղը տարելից է, որի մեջ ցավ, և հիշողություն կա և միաժամանակ ապրելու կամքի բացառիկ արտահայտություն, որը դրսևորվեց մեր ժողովրդի կողմից: Սակայն միայն կամքը, այն էլ այդ ժամանակներում բավարար չէր երկրաշարժի հետևանքները հաղթահարելու համար: Դա հնարավոր դարձավ սեփական ռեսուրսների, միջազգային կազմակերպությունների և երկրների աջակցությամբ: Այդ աջակցության մեջ անգնահատելի ու առանձնահատուկ էր Կարմիր խաչի միջազգային շարժման ներդրումը՝ իր բազմաթիվ ազգային ընկերությունների միջոցով, - ասված էր ուղերձում:

ԿԽՄՖ Եվրոպական տարածաշրջանի ղեկավար Սայմոն Մխիթրին իր ելույթում ասաց.

- Ինձ համար մեծ պատիվ է այստեղ ներկայացնել Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիան, ցավակցում եմ աղետալի երկրաշարժից տուժած ընտանիքներին և ազգականներին: Աղետից հետո մարդասիրական օգնությունն աննախադեպ էր, և Հայկական Կարմիր խաչն էլ



«Փարոս» կամերային երգչախումբ, խմբավար Ռուբեն Կարասեֆերյան

ԽԸ-ին հուշանվեր հանձնել:

ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության ամուսնից շնորհակալագրեր հանձնեց Ավստրիական, Գերմանական, Դանիական, Իտալական, Շվեյցարական, Ֆիննական, Նորվեգական Կարմիր խաչերի, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերություններ:



Կարմիր խաչի միջազգային շարժման արձագանքը նկարագրող լուսանկարների ցուցադրություն



Հ Ի Շ Ո Ւ Մ Ե Ն Ք



Վալենտին Թովմասյան, Հռիփսիմե Սկրտչյան, Գրիգոր Փիտեճեան, Գոհար Շազոյան, Արմենուհի Սեյրանյան Սոֆա Ազնաուրյան, Հովհաննես Մուրադյան «ԵՊԿ հրատարակչություն»ում 2008 թ.

ÖSTERREICHISCH-ARMENISCHE KULTURGESELLSCHAFT
ԱՌՍՏՐՕ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
A-1030 Wien, Kolonitzgasse 11 Postkasten 14, Armenienplatz
ZVR - Zahl 733661007

ՌՅՑ 26072/18
Վիեննա

Ազնուվալյա Տիկին Գոհար Շազոյան
Հիմնադիր, հրատարակիչ և գլխավոր խմբագիր
Երաժշտական Հայաստան Միջազգային ամսագիր
Երևան

Պատուարժան Տիկին Շազոյան,

Ինձ համար անողորմ գոյժ էր երբ տեղեկացայ իմ վաղեմի բարեկամ, ընկեր, հարազատ՝ Վալենթին Թովմասեանի մահուան մասին:

Երկար տարիների մեր բարեկամությունը միշտ նորոգում էր , թեկուզ կարճ հանդիպումներով, լինեին դրանք Վիեննա կամ Գրաց քաղաքներում՝ Մաեդուրո Լորիս ճգնառությանի ղեկավարությամբ, Հայաստանի Պետական Ֆիլհարմոնիկ հրաշալի նուագախմբի Աստրիոյ Հեռուս-

րի ֆեդերացիային և Կարմիր խաչի միջազգային կոմիտեին՝ երկրաշարժից հետո Հայաստանին և հայ ժողովրդին անգնահատելի մարդասիրական աջակցություն տրամադրելու համար: Շնորհակալագրեր կուղարկվեն նաև Ամերիկյան, Ռուսական, Ճապոնական, Ֆրանսիական, Շվեդական, Իսպանական Կարմիր խաչերին:

Միջոցառմանը ներկա էին պետական այրեր, միջազգային և տեղական կազմակերպությունների ղեկավարներ, դեսպաններ:

Միջոցառման ընթացքում ցուցադրվեցին Կարմիր խաչի միջազգային շարժման արձագանքը նկարագրող ֆիլմ և լուսանկարներ, «Մարդասիրության հզոր ուժը» խորագրով բեմական ներկայացում՝ երիտասարդ դերասանների մասնակցությամբ: Ելույթ ունեցավ «Փարոս» կամերային երգչախումբը (խմբավար Ռուբեն Կարասեֆերյան)՝ կատարելով Ռ. Պետրոսյանի «Արաքսն ասաց» երգը, ինչպես նաև՝ Սայաթ-Նովայի անվ. երաժշտական դպրոցի երգչախմբի (խմբավար՝ Մարիա Գալստյան) հետ համատեղ՝ Շառլ Ազնավուրի «Քեզ համար, Հայաստան» երգը:

† 0 ~ 0 † 0 0 † 0

Նյութը քաղված է <https://www.redcross.am/news/the-strong-power-of-humanity.html> կայքից



ՀԱՄԻԿ ՄԿՐՏՅԱՆ
Ըրնավիրի քաղաքապետարանի
երաժշտական դպրոցի
դաշնամուրային բաժնի
5-րդ դասարանի
աշակերտ,
15 տարեկան

ԵՐԿՐԱՇԱՐԺ

-Երկրաշա՛րժ, - գոչեց ժողովուրդը սարսափած:
Վատվեց իմ սրբուն բոցն աշկերծված,
Փլվեցին օջախները անմեղ, հայկական
Ահազանգ եղավ աշխարհը Հայաստան:

Մարդկային անմեղ զոհեր, դիակներ,
Երեխաների լաց, մայրերի փոշկոց,
Մի օջախ փլվեց՝ փրանելով
Իր հենր մի շարք մարդկանց կյանք:

Անմեղ հոգիներ զոհվեցին՝ վայրկյանում.
Խաղաղ երկրի փակ ապրել էին ուզում,
Բայց ի՛նչ փլվեցին հույսերը նրանց,
Ինչպես փլվեցին շենքերը կամաց-կամաց:

-Երկրաշա՛րժ, - գոչեց ժողովուրդը սարսափած՝
Մնալով քանդվող փխալրակի փակ:
-Երկրաշա՛րժ, - գոչեց ազգը քարացած:
Երկինք քարշրայցան հոգիները զոհված:



տատեսութեան հրաւերով, ծննդեան տօների առթիւ ամբողջօրեայ համերգների հիւրախաղերի կամ իմ համարեայ 1975 թուականից սկսեալ Աւստրո-Հայկական Մշակութային Ընկերութեան ամենամեայ Հայ եւ Աւստրիացի անդամների հետ Հայաստան այցելութեան օրերի առիթով:

Այս մեծ հայրենասերի, մտաւորականի, հայ Մամուլին եւ երաժշտութեան անսակարկ նուիրուած անհատի մահը անհեղի կորուստ էր, ոչ միայն իր հարազատների եւ բարեկամների, այլ նրան ճանաչող բոլոր անհատների համար:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի սիրելի բարեկամ, հաւերժի ճամբորդ:

Ռազմիկ Թամրազեան

Հայրենակցական ջերմ ողջոյններով՝
Ռազմիկ Թամրազեան-Յարթունեան


Ա. Սպենդիարյանի
տուն-թանգարան



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ «ՀԱՏԸՆՏԻՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ»Ը ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ ԴԱՇՆԱԿԱՅԱՐՆԵՐԻՆ

Սիմֆոնիկ նվագախմբի գույների վարպետ, երգեցիկ ծայրերի բազմազան հնչերանգներին կամերային և օպերային կյանք տված կոմպոզիտորի արվեստում դաշնամուրային երաժշտությունը համեմատաբար օժանդակող է: Նրա մահվանից ի վեր անցած 90 տարվա ընթացքում այդ բացը լրացվել է 2 անգամ: 1950-ին, Գեորգի Բուդաղյանի խմբագրությամբ հրատարակված «Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածու»-ի 9-րդ հատորում տեղ են գտել կոմպոզիտորի սիմֆոնիկ ստեղծագործությունների՝ իր իսկ փոխադրումները դաշնամուրի 4 ձեռքի համար: Հաջորդ անգամ՝ 1974-ին, «Հայկական պարերի դյուրացված փոխադրումներ»ը դաշնամուրի համար կատարել է Էդվարդ Բաղդասարյանը՝ ժողովրդական և հայ կոմպոզիտորների ստեղծած պարերի շարքում ընդգրկելով «Էնգելի»-ն՝ «Երևանյան էտյուդներ» սիմֆոնիկ սյուիտից և Տղամարդկանց պարը՝ «Ալմաստ» օպերայից: Սպենդիարյանի ստեղծագործությունները դաշնամուրային տարբերակով կատարողներին և երաժշտասերներին հասանելի դարձնելու նպատակն այս անգամ կյանքի է կոչվել 2018-ին, կոմպոզիտորի տուն-թանգարանի նախաձեռնությամբ: «Ալեքսանդր Սպենդիարյան Հատընտիր դաշնամուրային փոխադրում» ենալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ժողովածուն լույս է տեսել երաժշտության մի խումբ նվիրյալների ջանքերով:

Նախապես ընտրվել է սպենդիարյանական արվեստի 10 գոհար՝ վոկալ-կամերային («Այ վարդ», «Արևելյան օրորոցի երգ», «Մի լար, բլբուլ», «Օրորոցային» (Դրիմի թաթարների երգ), «Ղարիբ բլբուլ» (Սայաթ-Նովայի երգե-



Վիլի Սարգսյան, Արմեն Բուդաղյան



Արթուր Ավանեսով, Վիլի Սարգսյան

տընտիր»-ն առանձնանում է նաև ձևավորմամբ. նոտաներին կցված են լուսանկարներ՝ կոմպոզիտորի որոշ դիմանկարներ և ծաղրանկարներ, նրա Յալթայի առանձնատան կադրեր, ցանկուն ընդգրկված ստեղծագործությունների անդրանիկ հրատարակությունների տիտղոսաթերթեր, հատվածներ նամակներից և այլն:

Իսկ ահա երաժշտական հատվածն առանձին անդրադարձի, ինչու չէ, նաև ուսումնասիրության հիմք է տալիս: Փոխադրումների հեղինակը, մի կողմից, հարազատ է

ընդ, ԵՊԿ պրոֆեսորներ՝ Վիլի Սարգսյանը, Արմեն Բուդաղյանը, Ալինա Փախլանյանը, Հեռ Գալստյանը, Դավիթ Ղազարյանը, ՀԿՄ նախագահ՝ Արամ Սաթյանը, Վլադիլեն Բալյանը, Արթուր Ավանեսովը, դաշնակահարուհիներ՝ Նարինե Խաչատրյանը, Մարգարիտ Սարգսյանը, Սահենիկ Մաղաքյանը, խմբագիր Ռուզաննա Եսայանը, ներկայացուցիչներ տարբեր երաժշտական կրթօջախներից: Ներկաներին ողջունեց և ժողովածուի ստեղծման պատմությունը ներկայացրեց թանգարանի տնօրեն՝ Մարինե



Վլադիլեն Բալյան, Արթուր Ավանեսով, Արմեն Բուդաղյան, Վիլի Սարգսյան, Մարինե Օթարյան



Դավիթ Ղազարյան, Արամ Սաթյան, Ռուզաննա Եսայան, Արթուր Ավանեսով, Ալինա Փախլանյան, Արմեն Բուդաղյան, Վիլի Սարգսյան, Մարինե Օթարյան, Վլադիլեն Բալյան

րից), «Առ սիրուհիս» (հայկական ժողովրդական երգ)), սիմֆոնիկ («Երգ մկնիկի մասին»՝ «Ղրիմյան եսփոքներ» սիմֆոնիկ սյուիտից), օպերային (Աղջիկների պարը, Տղամարդկանց պարը և Պարսկական քայլերգը՝ «Ալմաստ» օպերայից) ոլորտներից: Փոխադրումների հեղինակը և ժողովածուի կազմողը դաշնամուրային արվեստն իր լուրջան հետ նույնացրած երաժիշտ՝ ԵՊԿ պրոֆեսոր Վիլի Սարգսյանն է. հիշեցնենք, որ անդրադարձը հայ մեծերին նրա համար նորություն չէ, մինչ այդ հրատարակվել են Կոմիտասի, Ա. Խաչատրյանի, Վ. Բալյանի ստեղծագործությունները՝ իր իսկ փոխադրումներով:

Ժողովածուի մասնագիտական խմբագիրն է երիտասարդ, բայց արդեն բեղուն ուղի անցած դաշնակահար և կոմպոզիտոր, արվեստագիտության թեկնածու Արթուր Ավանեսովը: Խմբագրի ներածականից բացի, այստեղ նա ներկայացրել է Սպենդիարյանի երգերի և ռոմանսների բանաստեղծական տեքստերի անգլերեն տարբերակները՝ յուրօրինակ գեղարվեստական թարգմանությամբ: «Հատընտիր»ը լույս է ընծայվել «Կոմիտաս» հրատարակչությունում, զլխավոր խմբագիր Ռուզաննա Եսայանի՝ ստեղծագործական գործընթացին ոչ պակաս հետևողական մասնակցությամբ: Հրատարակման աջակցներն են կոմպոզիտոր Վլադիլեն Բալյանը, երաժշտագետ Արմեն Բուդաղյանը և փիլիսոփայական գիտությունների դոկտոր Կարեն Սվասյանը (Շվեյցարիա):

Ձեռնարկի բովանդակությունը ներկայացված է երեք լեզվով՝ այն հասանելի դարձնելով ինչպես հայ, այնպես էլ այլազգի երաժիշտներին, այդպիսով նպաստելով հայկական դասական երաժշտության տարածմանը: «Հա-

մնում կոմպոզիտորի ոճին, ժամանակաշրջանի ոգուն և դրանք իր հերթին փոխացնում է կատարողներին: Մյուս կողմից, երաժշտական լեզվում առավելագույնս ընդգծվում են դաշնամուրային ֆակտուրայի առանձնահատկությունները՝ հետ չնմալով ժամանակակից կատարողական միտումներից: Արևելքի ու Եվրոպայի գեղագիտական միածուլունը՝ Սպենդիարյանի ընկալմամբ, դասական և ժամանակակից մոտեցումների համադրումը մեծ պատասխանատվություն են պահանջում այն դաշնակահարներից, որոնք կպատրաստվեն կատարել տվյալ փոխադրումները. տեխնիկական հմտություն, ոճի և կերպարների խորքային բացահայտում, ապա և՛ վերարտադրում: Երաժշտական ձևակառուցման և նյութի մշակման տեսանկյունից էլ փոխադրումներն աչքի են ընկնում օրինաչափ սկզբունքներով. սկզբնական կերպարը թե մեղեդային գծում, թե նվագակցության մեջ իմիտացիոն պոլիֆոնիկ արծազանքներով, հարմոնիկ և ռիթմիկ վարիացումներով, ռեգիստրների աստիճանական ընդլայնմամբ հասնում է զարգացման գագաթնակետի և ռեպրիզում ներկայանում արդեն նոր իմաստավորմամբ, ասես հայտնվում է նոցիոնալ և փիլիսոփայական նոր մի ալիքի վրա:

Դաշնամուրային գրականության մեջ բացառիկ այս ժողովածուն 1-ին անգամ ներկայացվեց նոյեմբերի 29-ին, ԵՊԿ ներքուհական գիտաժողովին, պրոֆեսոր Ա. Բուդաղյանի կողմից: Ձմռան առաջին օրն էլ, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի դահլիճում կայացավ շնորհանդեսը: Միջոցառմանը ներկա էին Մ. Սարյանի տուն-թանգարանի ֆոնդապահ, Ղ. Սարյանի դուստր՝ Սոֆիկ Սարյա-

նախադրումները և անկեղծ ուրախությունը ժողովածուի հրատարակման առթիվ հայտնեցին շնորհանդեսի պատվավոր հյուրերը, իսկ Ա. Ավանեսովն ու Վ. Սարգսյանը երաժշտության հնչյուններով առավել ջերմացրեցին դահլիճի մթնոլորտը՝ կատարելով փոխադրումներից մի քանիսը: Ա. Բուդաղյանը, տվյալ ժողովածուից բացի, ներկայացրեց նաև ԵՊԿ դոցենտ Ս. Մաղաքյանի՝ վերջերս հրատարակված «Հայաստանի կոնցերտմաստերները» ֆունդամենտալ գիրքը, որտեղ մի առանձին գլուխ նվիրված է Ա. Սպենդիարյանին:

Շնորհանդեսին Մ. Օթարյանը միջոցառման զլխավոր «մեղավոր»՝ Վ. Սարգսյանին շնորհեց յուրօրինակ պարզա՝ թանգարանի 50-ամյակի առթիվ թողարկված հուշանշան: Վերջինիս մասնակցությամբ առաջիկա «սխրագործություն»-ն էլ կլինի Ռոմանոս Մելիքյանի «Ձմրուխտի» երգաշարի դաշնամուրային փոխադրման հրատարակությունը:

Հ. Գ. – Կապասենք Սպենդիարյանի հատընտիր փոխադրումների նոր ու հետաքրքրական մեկնաբանություններին՝ տարբեր դաշնակահարների կատարմամբ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՅԱՆ
երաժշտագետ
Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի
գիտաշխատող

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Ա. Սպենդիարյանի
լուսն-բանգարան



1 Սկսնակ շնորհալի երաժիշտների մեծ աջակից մատչությունից հարկի տակ հավաքվեցին 21-րդ դարի երիտասարդ ստեղծագործողներ՝ իրենց նոր, համարձակ, առաջադեմ հայացքներով, նոր խոսքով, երաժշտության աշխարհում ինքնուրույն փնտրումներով և լուծումներով:

Հանդիպում թիվ 1 - «Երաժշտական ուրվապատկերներ»: ԵՊԿ կոմպոզիցիայի բաժնի 6 ուսանող նախապես հյուրընկալվեց թանգարանում՝ պատմելու իրենց կարծ, բայց ինքնատիպ գործունեության մասին, կիսվելու երաժշտության ապագա զարգացման տեսլականով: Միջոցառումը կայացավ հունիսի 25-ին: Ամառային շոգ երեկոյին հաճելիորեն ջերմ էներգետիկայով լցվեց թանգարանի փոքր, բայց մտերմիկ դահլիճը: Պատճառը, իհարկե, հավաքվելու առիթն էր և ներկաների ոգևորվածությունը՝ միասին բացահայտելու և քննարկելու երաժշտական ծրագիրը: Նոր ձևաչափի այս նախագծի մեկնարկը սկսեց տուն-թանգարանի տնօրեն՝ Մարինե Օթարյանը: Նա մեծապես խրախուսեց մասնակիցներին, կոչ արեց ներկաներին ակտիվ, անկեղծ և անաչառ գտնվել երաժշտական քննարկման ժամանակ և պատրաստակամություն հայտնեց նման անմիջական հանդիպումները դարձնել շարունակական:

Միջոցառման «հերոսներ»-ի մասնակից կոմպոզիտորների երաժշտական ուրվապատկերներն սկսեցին գծագրվել: Երեկոյի նախատեսվող դրամատուրգիայի և սցենարի համաձայն, կոմպոզիտորներից յուրաքանչյուրը ներկայացվեց հանգամանակի և ոչ ստանդարտ ներածական տեքստով: Նրանց ստեղծագործությունների հաջորդականությունն էլ, ըստ ժանրի և գործիքային կազմի, ընտրված էր հակադրության սկզբունքով՝ կերպարների և հնչյունագների բազմազանություն ստեղծելու նպատակով: Ի դեպ, երեկոն առանձնահատուկ էր նաև նրանով, որ կենդանի կատարումները զուգորդվում էին ձայնագրություններով կամ տեսագրություններով՝ այդպիսով ավելի սիմբետիկ դարձնելով միջոցառումը:

Երաժշտական ծրագիրն սկսվեց Անահիտ Մնացականյանի (այժմ արդեն՝ 2-րդ կուրս, պրոֆեսոր Լևոն Չաուշյանի մասնագիտական դասարան) 2 ալտ-սաքսոֆոնի համար գրված «Ստվերների գրույց» ստեղծագործությամբ: Կատարեցին Արթուր Քոչարյանը և Խաչատուր Երոյանը: Հեղինակը, իր խոսքերով, ընտրել է նույն գործիքները, որպեսզի միմյանց լրացնեն, զրուցեն և միաձուլվեն, այլ ոչ թե վիճեն: Կատարումից հետո Ա. Մնացականյանը սիրով լսեց ներկաների կարծիքները իր ստեղծագործության մասին, խորհուրդները, պատասխանեց հարցերին և կիսվեց իր երաժշտական ընկալումներով: Նույն սկզբունքով ներկայացվեցին նաև հաջորդ մասնակիցները և նրանց ստեղծագործությունները:

Ջեմմա Մինասյանի (այժմ արդեն՝ 3-րդ կուրս, պրոֆեսոր Արամ Սաթյանի ստեղծագործական դասարան և դոցենտ Արմեն Մեսրոպյանի թավջութակի դասարան) «3 հայկու»-ն ծայրի, ֆլեյտայի և թավջութակի համար երեկոյի հյուրերն ունկնդրեցին ձայնագրությամբ՝ բովանդակությանը համապատասխան լուսանկարների սլայդի ուղեկցությամբ: Կատարողներն էին՝ Արամ Մամիկոնյանը (վոկալ), Նարեկ Ավագյանը (ֆլեյտա), և հեղինակը (թավջութակ): Նշենք, որ հայկուն ճապոնա-

րում: Արամի Եքսպրոնտ-իմպրովիզացիան սանթուրի և դաշնամուրի համար ներկաներն ունկնդրեցին ձայնագրությամբ, թեմաներ Ջերեջյանի (սանթուր) և հեղինակի (դաշնամուր) կատարմամբ: Ավելացնենք, որ Արամը նաև ուսանում է Ամերիկյան համալսարանում և ուսումնասիրում է համակարգչային գիտություն:

Նախավերջին մասնակիցը՝ Հասմիկ Հակոբյանը (մագիստրատուրայի 2-րդ կուրս, պրոֆեսոր Լևոն Չաուշյանի մասնագիտական դասարան) առանձնանում է բազմակողմանի հետաքրքրություններով՝ ժամանակակից պար, նկարչություն, լուսանկարչություն, պոեզիա և իհարկե, երաժշտական կոմպոզիցիա: Իր Ֆիզիոլոգիաներ ստեղծագործությունը դաշնամուրի համար էլ կատարեց անձամբ և նշեց, որ այն կարող է լինել նաև խորեոգրաֆիկ պիես՝ հատուկ պարային բեմադրությամբ:

Երեկոյի «աղանդեր»-ը դարձավ Հերմինե Հարությունյանի (մագիստրատուրայի 1-ին կուրս, պրոֆեսոր Լևոն Չաուշյանի դասարան) «Դիսոնանս» խորագրով վավերագրական կարճամետրաժ ֆիլմի դիտումը: Երիտասարդ կոմպոզիտորը նաև լրջորեն զբաղվում է ռեժիսուրայով, և այս հանդիպմանը ներկայացրեց հենց իր ֆիլմը, որում հնչում է իր համանուն ստեղծագործությունը թավջութակի և դաշնամուրի համար, Ջեմմա Մինասյանի (թավջութակ) և հեղինակի (դաշնամուր) կատարմամբ: Ավելացնենք, որ ֆիլմը 2017-ին արժանացել է «Բուն թիվի» առցանց հեռուստաընկերության մրցանակին համապատասխան ամվանակարգում: Գլխավոր հերոսուհին Իջևանի գյուղերից մեկում ապրող երիտասարդ բանասեր է, նա կիսում է իր պատկերացումները կյանքի և արվեստի մասին, որոնք շրջակա աշխարհի հետ իսկական դիտման են ստեղծում:

Ֆիլմի դիտումը նոր զգացողություններ պարզեց ներկաներին, որոնց թվում տարբեր սերունդների երաժիշտներ էին և պարզապես երաժշտասերներ: Երաժշտական քննարկման ակտիվ մասնակիցներն էին թանգարանի տնօրեն՝ Մարինե Օթարյանը, երաժշտագետ, լրագրող՝ Օլյա Նուրիջանյանը, խմբավար, մանկավարժ՝ Լուսինե Արշակյանը, երաժշտագետ, մանկավարժ՝ Արմինե Հայրապետյանը, ինչպես նաև այլ հյուրեր: Նախագիծը ողջունեցին երիտասարդ երաժշտագետներ՝ Լիաննա Եղիազարյանը, Անահիտ Մուղայանը, Սոնա Սիմոնյանը, իսկ ԵՊԿ դոցենտ, երաժշտագետ և հոգեբան Լիլիթ Եփրեմյանը երաժշտական ծրագիրն ունկնդրելուց հետո իր նշանակալի և անչափ կարևոր խոսքն ու դիտարկումը ներկայացրեց մասնակիցների և նրանց ստեղծագործությունների վերաբերյալ: Ներկաները բաժանվեցին՝ երաժշտական նոր հանդիպումների ակնկալիքով:

Հանդիպում թիվ 2 - «Միասին՝ Հայաստանում»: Սեպտեմբերի 19-ին, ՀՀ Անկախության հռչակման 27-ամյակին ընդառաջ, տուն-թանգարանի դահլիճում կայացավ «Միասին՝ Հայաստանում» խորագրով հանդիպումը: Այս անգամ մասնակից երիտասարդ կոմպոզիտորները սփյուռքահայեր էին և նշանավորում էին օտար երկրներից Հայրենիք եկած մեր ազգակիցների գործունեությունը հանրապետության երաժշտական կյանքում: Թե ինչպե՞ս են հաստատվել Հայաստանում, ինչպիսի՞ զգացողություններ ունեն որպես երիտասարդ ստեղ-

դասարան) միջոցառման համար պրեմիերա էր պատրաստել: Նա ձայնագրությամբ ներկայացրեց իր «Թռիչք դեպի հայրենիք» կամ «Flying home» խորագրով նազախմբային հոգեպարար կոմպոզիցիան:

Հավելապահայ, այժմ արդեն՝ ընտանիքով հանդերձ ՀՀ-ում հաստատված Սարգիս Աղամյանը երեկոյի ամենամալագ և հագեցած ուղի անցած մասնակիցն էր: Նրա դաշնամուրային կոմպոզիցիան՝ Կոմիտասի «Կռունկ» երգի մշակմամբ, ներկաներն ունկնդրեցին հեղինակի կատարմամբ, զուգահեռաբար ռադիոընդունիչով հնչող Վարդապետի ձայնի ուղեկցությամբ: Իսկ նրա «Այցելուս այլ աշխարհից» կամ «The visitor from other world» պատկերավոր, խորագրին զարմանալիորեն համահունչ ստեղծագործությունը տերմենվոքսի և դաշնամուրի համար կատարեցին Սաթենիկ Հակոբյան-Ուլիխանյանը և Անահիտ Դիլբարյանը:

Երաժշտական գույնների, ժանրերի և ոճերի բազմազանության սկզբունքը շարունակելով՝ հավելապահայ Բարդի Մինասյանը (ԵՊԿ կոմպոզիցիայի բաժնի բակալավր՝ պրոֆեսոր Վարդան Աճեմյանի դասարան և դասական կիթառի բաժնի մագիստրոս, պրոֆեսոր Հակոբ Ջաղացպանյանի դասարան) կատարեց Գրիգոր Մագիստրոս Պախլավունու «Խաչն կենարար» շարականի մշակումը դասական կիթառի համար: Երաժշտական ծրագիրն էլ եզրափակվեց նրա «Դու, ինչ-որ մեկը» ստեղծագործության համերգային տեսագրության դիտումով. բանաստեղծական տեքստի հեղինակ՝ Հերմիկ Երոյան, կատարողներն էին՝ Բարդի Մինասյանը (ասմուլնք), Աննա Ավդալյանը (սոպրանո), Հայկազ Կարապետյանը (ալտ), և Լուսինե Խաչիկյանը (դաշնամուր):

Բարդիի ստեղծագործությունների բուն և հակասական կարծիքներով քննարկումը, կարելի է ասել, բարձրակետին հասցրեց միջոցառումը: Ակտիվ քննարկումը ծավալվեց հատկապես ականավոր դաշնակահար, «Տաղարան» հնագույն երաժշտության անսամբլի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Սեդրակ Երկանյանի, ԵՊԿ դոցենտ, երաժշտագետ և հոգեբան՝ Լիլիթ Եփրեմյանի, երիտասարդ կոմպոզիտոր՝ Դավիթ Բալասանյանի, երաժշտագետներ՝ Անի Հակոբյանի, Կարինե Հովհաննիսյանի մասնակցությամբ: Առանձնահատուկ էին Լ. Եփրեմյանի ելույթները յուրաքանչյուր ստեղծագործության ունկնդրումից հետո, երիտասարդ կոմպոզիտորների ուրույն բնութագրությամբ, մասնագիտական խորհուրդներով և նաև քաջալերանքով:

Երեկոյի «զարկերակ»ը ակտիվ էր պահում թանգարանի տնօրեն՝ Մարինե Օթարյանը, իր իսկ անմիջական մոտեցումը կիսելով, կարծիքների փոխանակման առողջ ու անմիջական մթնոլորտը պահպանելով, ինչպես նաև մեջբերելով 20-րդ դարի սկզբին Հայրենիք եկած Սպենդիարյանի կյանքի որոշ դրվագներ. չէ՞ որ որոշակի նմանություն կա դրանց և 100 տարի անց՝ 21-րդ դարի սկզբի հայրենիքից երիտասարդ կոմպոզիտորների զգացողությունների և ստեղծագործական մղումների միջև, իսկ այդ օրինակափոխությունները բացահայտելը նույնպես միջոցառման առանցքում էր: Երբ միջոցառումը հայտարարվեց ավարտված, թանգարանի աշխատակիցներն ականատես եղան մի զարմանալի և ուրախալի տեսարանի.



Անահիտ Մնացականյան, Ջեմմա Մինասյան, Հերմինե Հարությունյան, Արամ Խանկարի, Անահիտ Գրիգորյան, Հասմիկ Հակոբյան



Սաթենիկ Ուլիխանյան, Անահիտ Դիլբարյան



Բարդի Մինասյան

կան պոեզիայի ժանր է, ներկայացնում է 17 վանկանի եռատող, և չնայած դրան, կարող է պարունակել խորը բովանդակություն: Տվյալ հայկունները նվիրված են աշնան թեմային: Հեղինակը կրկին ակտիվորեն մասնակցեց քննարկմանը:

Անահիտ Գրիգորյանը (այժմ արդեն՝ 2-րդ կուրս, պրոֆեսոր Լևոն Չաուշյանի մասնագիտական դասարան) անձամբ կատարեց իր անանուն պիեսը դաշնամուրի համար, որն աչքի է ընկնում ինքնաբերական էներգետիկայով, համարձակ լուծումներով, ինչպես նաև երաժշտական տարբեր ոճերի միախառնումով: Համեստ և սակավախոս Անահիտի ստեղծագործությունն ու դրա առաջնակարգ կատարումը ոգևորության և կարծիքների մի նոր ալիք բարձրացրեցին ունկնդիրների շրջանում:

Երեկոյի հաջորդ մասնակիցը իրանահայ երիտասարդ կոմպոզիտոր Արամ Խանկարին էր (արվեստագիտության թեկնածու Արթուր Ավանեսովի ստեղծագործական դասարան): Իր մեջ կրելով 2 հարստագույն մշակութային ավանդույթներ ունեցող ազգերի բնորոշ երաժշտական տարրերը՝ նա դրանք ներդաշնակ կերպով համադրում է նաև իր կոմպոզիցիաներ-

ծագործողներ, ի՞նչ հեռանկարներ և խնդիրներ են տեսնում մասնագիտական ասպարեզում և արդյոք իրենց ապագան պատկերացնո՞ւմ են Հայրենիքում. այս բոլոր հարցերի շուրջ իրենց մոտեցումները, ինչպես նաև ստեղծագործական սկզբունքները կիսեցին սիրիահայ և լիբանանահայ կոմպոզիտորները: Ունկնդիր-մասնակից երկխոսությունն այս անգամ կայացավ ավելի անմիջականորեն և արդյունավետ կերպով, քննարկմանն էլ ակտիվ մասնակցություն ունեցան ինչպես ավագ սերմնի, այնպես էլ երիտասարդ կոմպոզիտորներ և երաժիշտագետներ:

Բեյրութահայ Սևան Դարիբյանը (3-րդ կուրս, ԵՊԿ ստեղծագործական ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Վարդան Աճեմյանի մասնագիտական դասարան) կատարեց իր «Պայք և պայիկ» խորագրով ինքնատիպ դաշնամուրային կոմպոզիցիան՝ ներշնչված հայկական, իսլամական, նորվեգական և այլ ազգերի դիցաբանական 6 կերպարներից: Կատարմանն անմիջապես հաջորդեց աշխույժ քննարկումը:

Դամասկոսից Երևան տեղափոխված Շիրազ Այարյանը (2-րդ կուրս, պրոֆեսոր Ստեփան Ռոստոմյանի մասնագիտական

ներկաները, մասնակիցներին շնորհավորելով, ջերմ, մտերմիկ, «պրիֆոնիկ» զրույց ծավալեցին, և կարծես միմյանց գտած կամ կրկին հանդիպած մասնակից-ունկնդիր օղակների միավորումը հենց միջոցառման առաքելության զագաթնակետն էր:

Հ. Գ. – *Նմանատիպ երաժշտական հանդիպումները կարիք ունեն շարունակվելու, կատարելագործվելու, ավելի արդյունավետ ու թիրախային դառնալու, ավելի մեծ թվով մասնագետների ընդգրկելու և նպատակելու ստեղծագործական դաշտում անտարբերության վերացմանը, առողջ քննադատության դրսևորմանը: Կարծիքներն ու առաջարկներն էլ ողջունելի են և սպասված:*

ՀԱՄՄԻԿ ՀԱՄԱՐՅԱՆ
երաժշտագետ
Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի
գիտաշխատող

ПРЕДАННОСТЬ ИСКУССТВУ



Рубен Матевосян и Мартын Вартазарян



Выступают юные певицы Музыкальной школы им. С. Асламазяна, педагог А. Джулфалакян



Директор Музея литературы и искусства им.Е.Чаренца Каро Вартамян



Леонад Казарян

1 В 2013 году Наира Хачатрян участвовала в Международной научной конференции в Шуши, где выступала с докладом о выдающемся композиторе, хормейстере и общественном деятеле Даниеле Казаряне. В течение 50 лет своей творческой деятельности он организовал в различных городах Советского Союза около 250 хоров и дал более 1000 концертов. На протяжении всей творческой деятельности композитором были созданы более 300 детских песен, романсов, хоровых и вокальных произведений. Перу композитора принадлежат также пять детских опер, музыкальные зарисовки и две музыкальные драмы.

Представим основные вехи жизни и творчества Даниела Казаряна. Родился 5-го мая 1883 г. в городе Шуши (Нагорный Карабах), отличался яркой индивидуальностью: чисто пел, играл на свирели, таре, скрипке, баритоне. В 7 лет поступил в приходскую школу Шуши, был учеником пропагандиста армянской песни Степана Демурына. В 1906г. Даниел отправился в Баку и поступил в музыкальную школу на вокальное отделение в класс Петрова. Год спустя Даниел поступил в Императорское музыкальное училище в Тифлисе (в дальнейшем – консерватория), где учился у З.Палиашвили, Н.Черепнина, Н.Николаева и Т.Гартмана.

В 1908г. Даниел Казарян становится членом основанной молодым Романосом Меликяном «Музыкальной лиги», целью которой было создание детской музыкальной литературы. В том же году он пишет свою первую детскую песню «Красивая бабочка» (сл. Газарца Агаяна). Даниел Казарян руководил основанными им хорами, гастролировал с концертами. В 1911г. в Александрополе он женился на Катари́не Меликсетян и молодая чета переехала в Тифлис. В 1912г. «Музыкальную лигу» сменяет созданное по инициативе Спиридона Меликяна «Армянское музыкальное общество» Тифлиса. В 1917г. было создано «Кавказское хоровое общество», одним из основателей которого был Даниел Казарян. Композитор повсюду основывал новые хоровые коллективы, выступая с концертами в Александрополе, Каракилисе, Дилижане, Нор-Баязете, Ереване, Эчмиадзине, Лори и т. д. К нему во время гастролей присоединяется брат, Вагаршак Казарян, разносторонне одаренный музыкант и художник, сын которого, Рафаэль, основал впоследствии популярный грузинский детский вокально-инструментальный ансамбль «Мзиури».

В 1922г. композитор основывает и руководит музыкальной студией в Батуми. В 1920–30-е годы создаются «Дома армянского искусства» («Айартун»), Батумской музыкальной секцией «Айартун» руководил Даниел Казарян.

Основным жанром творчества Д.Казаряна были песни и романсы: «Ива» (сл. А. Исаакяна), первой исполнительницей была сестра композитора, Анаида Казарян; два романа на слова А. Исаакяна – «Сестра моя, нежная» и посвященный певцу Шара Тальяну романс «Коралловые склоны», который и стал его первым исполнителем; «Ни ропота...» (сл. В.Терьяна); «Осенняя песня» (сл. О.Айрапетян) и др. Жемчужинами песенного наследия Д. Казаряна можно назвать песни-романсы «Любовь орла», «Под платанами», «Грузинская девушка». Вместе с Романосом Меликяном и Александром Спендиаряном Даниел Казарян стал одним из основателей армянского романса.

В 1924г. композитор основал Музыкальную студию в Ленинкане, был одновременно руководителем и преподавателем теоретических предметов. От отдела просвещения студия получила различные музыкальные инструменты, а пианино композитору пришлось покупать на собственные деньги. В эти же годы Даниел Казарян создает инструментальные произведения для разных составов.

Ленинканское землетрясение 1926 года на время прервало работу студии. Собирая деньги на ее восстановление, композитор едет в Тифлис, Баку и в другие города с благотворительными концертами.

В 1928г. для организации очередных хоровых концертов Казарян едет в Краснодар, Ростов, Новороссийск, Армавир, а также в разные города Армении, Грузии, Азербайджана и Северного Кавказа. Примечательно, что созданные им хоры продолжали действовать и после отъезда композитора.

Произведения Д. Казаряна исполнялись также в Москве и в Ленинграде. В 1933г. Д.Казарян, будучи уже известным композитором и хормейстером, переезжает в Ереван, а весной 1935г. организует первую республиканскую детскую музыкальную Олимпиаду, победительницей которой становится 10-летняя Офелия Амбарцумян с песней Д.Казаряна «Песня ручья», специально написанной для нее. В этой же Олимпиаде принимали участие 7-хлетний Рафик Степанян, впоследствии видный теоретик, профессор ЕГК и 4-хлетний Вилли Саркисян, исполнивший собственное произведение «Птичка в клетке», впоследствии видный пианист, педагог, также профессор ЕГК.

В Ереване Даниел Казарян начал преподавать в школе для незрячих детей. С их участием в зале Армфилармонии состоялся концерт. В 1939г. Композитор составил свое первое методическое пособие, за которым последовали пособия 1949 и 1954 годов.

В 1945г. хор учителей под руководством Д.Казаряна выступил во Всесоюзном смотре хоровой самодеятельности в Москве. Успехи хора были освещены в общесоюзных газетах.

Многолетняя творческая и педагогическая деятельность композитора получила высокую оценку. В 1944г. Даниелу Казаряну присуждается звание Заслуженного педагога Советской Армении, в 1945г. – Заслуженного деятеля искусств, а в 1949г. он получает высшую награду Советского Союза – орден Ленина.


Даниел Казарян скончался в Ереване в декабре 1958г.

Сын композитора, Леонад Казарян, дирижер по образованию, около 40 лет проработавший звукорежиссером в Телерадиокомитете Армении, обратился к Наире Хачатрян с просьбой написать книгу, рассказал многое, что слышал из уст отца. В дальнейшем, в процессе работы нельзя было не заметить трепет, с которым сын бережно с любовью относился к своему отцу, к каждой ноте, фразе, и написанной и во всем ощущалась мечта увидеть книгу. К счастью, она сбылась. Семья композитора предоставила нотные рукописи (около 300 сочинений) – детские песни и романсы. Наира выбрала наиболее известные произведения и очень бережно, сохранив авторский текст, отредактировала фортепианную партию. В приложении к книге опубликованы 7 детских песен и 7 песен и романсов Даниела Казаряна в ее редакции. В работе над книгой большое содействие оказала и внучка Даниела Казаряна, Анаида Казарян – биохимик и дизайнер.

На презентации присутствовали народный артист РА Рубен Матевосян, известный композитор и пианист Мартын Вартазарян, редактор книги профессор ЕГК Давид Казарян, коллеги Наире Хачатрян по консерватории, одноклассники мамы Наире, Фрины Бабаян, по школе им.Крупской – представители поколения, с детства знакомого с песнями и романсами Даниела Казаряна.

Со вступительным словом выступил директор музея Каро Вартамян, книгу представила всем присутствующим музыковед Сусанна Налбандян.

Естественным было желание Наире Хачатрян во время презентации исполнить песни Казаряна: во-первых, еще раз напомнить о них, а также озвучить отредактированный ею аккомпанемент. Н. Хачатрян, являясь автором многочисленных изданий (соавтор переложений произведений Комитаса для фортепиано в четыре руки, автор переложения сюиты для двух фортепиано на темы оперы Дж.Гершвина «Порги и Бесс», маршей из опер Глюка, Моцарта, Бетховена, Беллини, Гуно, Мейербергера, Верди, Вагнера для фортепиано в четыре руки, переложения «Вальса», «Танца Айше» и «Танца розовых девушек» А.Хачатуряна для флейты, виолончели и ф-но) имеет богатый опыт работы с авторским нотным текстом. Для нее было важно услышать мнение коллег-профессионалов и любителей музыки о проделанной работе. Надо отметить, что аккомпанементы к детским песням, выполненные профессионально и со вкусом, в исполнении концертмейстера Марины Гушян прозвучали на презентации очень свежо, дополняя яркие образы детских песен Д. Казаряна. Благодаря мастерству педагога



Даниел и Леонад Казаряны



Анаида Казарян и Наира Хачатрян

музыкальной школы им.С.Асламазяна Асмик Джулфалакян, дети в очень короткий срок выучили и очень хорошо исполнили песни: «Красивая бабочка» – Меликян Марине; «Джан, джан, осень» – Карагулян Ева; «Жалоба котенка» и «Маленькая птичка» – Аванесян Ани; «Малыш и снег» – Авакян Элен; «Весна» и «Новый год» – Агабекян Асмик.


Интересен факт, о котором рассказала Наира Хачатрян. «В процессе работы над книгой о Д.Казаряне неожиданно для меня через десятилетия состоялась встреча с моими предками. В одном из архивов мне попала в руки книга Ерэванды Сардаряна «Страницы моей жизни», изданная в 1964 году. В книге композитор очень подробно делится воспоминаниями о сотрудничестве с Д.Казаряном, о встречах со многими известными личностями своего времени. В 1923 году Е.Сардарян готовился уехать в Иран на гастроли. Через несколько дней после получения иранской визы в Тифлисе он встретился с композитором Антоном Маиляном, который передал письмо на имя Авага Хачатряна, председателя Совета Армянской общины Энзели. В Энзели Ерэванд Сардарян гостил в доме Авага Хачатряна. И Аваг, и другие активисты армянской общины помогли ему в организации музыкальных вечеров.

Аваг Хачатрян – родной брат моего деда по отцовской линии, Сурена Алексановича Хачатряна. Для меня и моей семьи упоминание имени моего предка в ряду деятелей армянской культурной среды начала XX века стало целым событием. Не могу не упомянуть также, что автором предисловия книги Ерэванды Сардаряна «Страницы моей жизни» является брат моей бабушки по материнской линии, доктор искусствоведения Ншан Мурадян».

По воле судьбы и герой книги, и автор являются людьми, в нескольких поколениях преданными искусству, армянской культуре.

Р.С. Именем Даниела Казаряна названы музыкальные школы в Артике и Шуши, а его песни и романсы любимы и исполняются по сей день. Ознакомившись с книгой, и особенно с нотным приложением, автор этих строк решила передать песни Г.Казаряна в детский сад, в который ходит внучка и в сад №8, который посещали ее дети и пригласить на презентацию преподавателя, концертмейстера, долгие годы работающего в детских садах Еревана Ануш Карапетян. Результаты не заставили себя ждать: после презентации и особенно, после ее концертной части выяснилось, что песню «Новый год» уже в этом году разучат и исполнят на праздничном утреннике в одном из ереванских детских садов.

СОФА АЗНАУРЯН,
композитор, редактор
журнала «Музыкальная Армения»



Работа с программой “MuseScore” (урок 8):

Набор полной партитурной системы

Чтобы не делать при наборе партитуры никаких лишних операций, надо заранее планировать:

- А) Для какого состава должна быть партитура
- Б) Какие именно инструменты должны быть выбраны
- В) Сколько нотноносцев на каждый инструмент должно быть выделено.


Это все вчерне должно быть составлено в виде плана на бумаге, а затем приступаем к делу. Допустим, нам надо набрать партитурную систему для полного тройного состава симфонического оркестра. Значит нам нужно:

- 1 нотносец для пикколо
- 1 нотносец на 2 флейты
- 1 нотносец на 2 гобоя
- 1 нотносец на английский рожок in F
- 1 нотносец на 2 кларнета in B (сейчас принято писать Bb)
- 1 —/»—/»— на бас-кларнет in B
- 1 —/»—/»— на 2 фагота
- 1 —/»—/»— на контрафагот
- 2 нотносоца на 4 валторны in F
- 1 или 2 нотносоца на 3 трубы in B
- 2 нотносоца на 3 тромбона и тубу
- 1 нотносец на литавры
- Несколько ниток на ударную группу (4–5)
- 5 нотносоцев на струнную группу


Итого – 24 нотносоца, включая одинарные для ударных.

Это количество нотносоцев – стандарт партитурного листа.


Для него подбираем формат бумаги А3. Теперь попробуем набрать первый лист нашей партитуры со всеми названиями и титулами. Наименование инструментов – итальянское или английское:




Так у нас будет выглядеть группа деревянных:




А так – группа медных:




Группа ударных:



И группа струнных:



Итак, набор нотносоцев вчерне был выполнен, но, писать на такой системе будет неудобно, так как инструменты не нумерованы, нет групповых и подгрупповых акколад. Все это нам сейчас придется сделать. Начнем с акколад. Объединяем погруппно деревянные, медные, ударные и струнные инструменты, точнее – их нотносоцы. Для этого вызываем главную палитру (Shift F9), оттуда – палету *Աղյուսակներ* (Акколады) и начинаем группировать сперва группы, потом – подгруппы:





Для лучшего обзора и эстетики расстояние между последним нотносоцем первой группы и первым нотносоцем следующей группы должно быть шире, для чего кликаем на первый нотносец следующей группы и, нажимая Shift, не отпуская его и левую кнопку мыши, перетаскиваем его немного вниз.

Теперь приведем в порядок названия и количество инструментов.

Для этого мы щелкаем левым кликом у нужного нам названия инструмента. Когда оно станет синим, клавишей "←" стираем это название, заменив его нужным:

**Работа с программой “MuseScore” (урок 8):
Набор полной партитурной системы**

11



Посмотрим теперь на общий вид нашей страницы:


Не правда ли красиво?
Теперь надо на этом листе написать не менее красивую музыку.
На этом наши первичные занятия по работе с MuseScore завершаются. Остальное – при встрече.

ՏԱՐԳԻՍ ԷՄԻԼՅԵՎԻՇ ՕԳԱՆԵՍՅԱՆ
кандидат искусствоведения,
преподаватель ЕГК им. Комитаса

« Ե Ր Ե Վ Ա Ն Յ Ա Ն Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր »



Մարգարիտա Յովհաննիսյան,
1-ին մրցանակ



Արևիկ Գուլարյան,
2-րդ մրցանակ



«Ad libitum».

Ընդհակառակ ենք բոլորին այս 7 հրաշալի շաբաթները մեզ հետ անցկացնելու համար: Թեյախմությունները լինելու են շարունակական, իսկ մոր մտքերն ու մեծ և հետաքրքիր նախագծերն արդեն մտածված են. դրանք միասին կիրականացնենք եկող տարում:

✓ Արմավիրի արվեստի պետական քոլեջի «Դիզայն» բաժնի ուսանողներ՝ Արևիկ Գուլարյանը և Մարգարիտա Յովհաննիսյանը, դասախոս՝ Սիմա Զանգրեկյանի ուղեկցությամբ հաղթանակով վերադարձան Սարատով քաղաքում անցկացված «Աշխարհի ներկայակներ» խորագրով մշակույթի և արվեստի փառատոնի շրջանակներում երիտասարդ դիզայներների և մոդելավորողների «Կտորից մի ողջ աշխարհ կստեղծեն» թեմայով միջազգային բաց մրցույթից:

✓ Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, կոմպոզիտոր Նարինե Զարիֆյանը հորեյանի առթիվ, ինչպես նաև հայ մշակույթի զարգացման գործում ունեցած ավանդի համար պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով:



Նարինե Զարիֆյան

✓ «Ad libitum»ը հաստատվել է որպես հայաստանյան արվեստի բուհերի մի խումբ ուսանողների սկսած նախաձեռնություն: Այն բաց է յուրաքանչյուրի առջև, ով ունի սեփական պատկերացումներն ու գաղափարներն արվեստի, կյանքի և ազատության մասին: Նրա կարգախոսն է. «Լինենք քննադատող, վերլուծող, ստեղծագործ...Ազատենք արվեստը ընդունված կարծրատիպերից» (<https://www.facebook.com/adlibitum.initiative>):

✓ Դեկտեմբերի 21-ին Առնո Բաբաջանյան համերգասրահում տեղի ունեցավ Արգար Մուրադյանի անվ. երիտասարդ կլարնետահարների 2-րդ հանրապետական մրցույթի մրցանակաբաշխությունը և Գալա-համերգը: Կրտսեր խմբում 1-ին մրցանակի արժանացավ Ալբերտ Թովմասյանը, 2-րդ մրցանակին՝ Էդուարդ Խորոզյանը, Իլյա Բրտոյանը, 3-րդ



Արգար Մուրադյանի անվան երիտասարդ կլարնետահարների 2-րդ հանրապետական մրցույթի մրցանակակիրներ

մրցանակին՝ Վարդադատ Յովհաննիսյանը և Էդգար Գասպարյանը: Խրախուսական մրցանակ շնորհվեց Մարիամ Մարտիրոսյանին: Ավագ խմբում 1-ին մրցանակակիր դարձավ Ավետիք Ղազարյանը, 2-րդ մրցանակ՝ Թեման Մխոյան, 3-րդ մրցանակ՝ Վարդգես Հակոբյան և Սերոբ Ասատրյան: «Արգար Մուրադյան» կրթաթոշակ ընտանիքի կողմից, նշանակվեց Յովհաննես Զիրոյանին:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆՍՏՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՆ ԱՆՎԱՆ ԴԵՏԱՎԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ԴԵՏԱՎԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱԾԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03U059505 տրված 7.04.2003թ.
ԳԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵԴԿ ՊՈՍԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՅԱՆ, ԳՈՐԾՐ ՇԱԳՈՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:
Տպագրանակը՝ 101: Ծավալը 8 էջ: Ստորագրված է տպագրության 28.12.2018:
Տպագրվում է՝ «ԳԵՎՈՐԳ ԵՎ ԳՐԱՅԻՐ» ՍՊԸ տպարանում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունն նշված հասցեով.

Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆ
Թղթակցական պատասխանատու՝ ԳՈՐԾՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ՍՈՖՅԱ ԱԶՆԱՌԻԶՅԱՆ (ռուս.)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՐԾՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

0001, ք.Երևան, Սայաք-Նովա 1ա
հեռ.՝ (+374 10) 523 993+118
ֆաքս՝ (+374 10) 563 540,
<http://www.conservatory.am>,
E-mail: yksc@conservatory.am,
YSCPublishingHouse@conservatory.am

